



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

No

72-Ա/2,03.02.2017թ.

« »

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՅՆՈՂ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ
ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՈՒ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ
ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի հոդված 16-ի 4-րդ կետը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. մարտի 4-ի «Հայաստանի Հանրապետությունում նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման մասնագիտությունների և որակավորումների՝ կարողությունների ձևավորմանը միտված պետական կրթական չափորոշիչների մշակման և ներդրման հայեցակարգին և գործողությունների ցանկին հավանություն տալու մասին» N 8 արձանագրային որոշումը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ.

1. Հաստատել՝ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատություններում օգտագործվող ուսումնական ձեռնարկների և այլ ուսումնական նյութերի ընտրության ու փորձաքննության կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարում եմ նախարարի տեղակալ Մանուկ Մկրտչյանին:

Հավելված

ՀՀ կրթության և գիտության նախարարի
----- 2017 թվականի N----- հրամանի

Կ Ա Ր Գ

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատություններում օգտագործվող ուսումնական ձեռնարկների և այլ ուսումնական նյութերի ընտրության ու փորձաքննության

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն փաստաթղթով սահմանվում են Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) (այսուհետ՝ արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատություններում օգտագործվող ուսումնական ձեռնարկների, ուսումնաօժանդակ և ուսումնամեթոդական գրականության, ուսումնադիտողական պարագաների և նյութերի, ուսումնական հանրամատչելի գրականության և համակարգչային ուսումնական նյութերի (այսուհետ՝ ուսումնական նյութեր) բովանդակությանը, կառուցվածքին, ընտրությանն ու փորձաքննությանը ներկայացվող պահանջները:

2. Ուսումնական նյութերի տեսակներն են.

1) Ուսումնական ձեռնարկը, որը ուսումնական ծրագրին համապատասխան առարկայի (դասընթացի, մոդուլի), դրա առանձին բաժինների, մասերի որոշակի մեթոդաբանությամբ համակարգված շարադրանքն է:

2) Ուսումնաօժանդակ գրականությունը (հանրագիտարաններ, քրեստոմատիաներ, ատլասներ, շտեմարաններ, բառարաններ, խնդիրների և վարժությունների ժողովածուներ, աշխատանքային տետրեր, քարտեզներ) ուսուցման գործընթացին օժանդակող գրականություն է, որը պարունակում է լրացուցիչ տեղեկատվություն տվյալ ուսումնական առարկայից

(դասընթացից, մոդուլից) կամ գործնական առաջադրանքներ, խնդիրներ և վարժություններ, որոնք նպաստում են ուսումնական նյութի յուրացմանը, ամրապնդմանը և ուսանողների, ունկնդիրների (այսուհետ՝ ուսանող) գիտելիքների, կարողությունների ու հմտությունների ստուգմանը և գնահատմանը:

3) Ուսումնամեթոդական գրականությունը (մեթոդական ձեռնարկներ, թեմատիկ պլանավորումներ, գործնական, լաբորատոր աշխատանքների կատարման, խնդիրների լուծման և այլ բնույթի ուսումնամեթոդական աշխատանքներ) ընդգրկում է ուսումնական առարկայի (դասընթացի, մոդուլի), դրա առանձին մասերի և բաժինների դասավանդմանն ուղղված մեթոդական նյութեր և երաշխավորություններ:

4) Ուսումնադիտողական պարագաները և նյութերը (տպագրված, ծավալային, էկրանային), որոնք ուսուցմանը և դաստիարակությանը նպաստող՝ պատկերային տեսքով ներկայացված և ուսումնական նյութի գործնական կիրառմանն ուղղված ուսումնական միջոցներ են:

5) Ուսումնական հանրամատչելի կամ գեղարվեստական գրականությունը (հեքիաթներ, գեղարվեստական, գիտահանրամատչելի և այլ ստեղծագործություններ), որը ուսանողի աշխարհայացքը, լեզվամտածողությունը, իմացական (ճանաչողական) կարողությունները, գեղագիտական ընկալումն ու ճաշակը զարգացնող, հուզական-զգայական վերաբերմունք ձևավորող ու բարոյական հատկանիշների, սոցիալական հմտությունների և արժեքների զարգացմանն ուղղված լրացուցիչ ուսումնական միջոց է:

6) Համակարգչային ուսումնական նյութերը (էլեկտրոնային դասագիրք, լաբորատորիա, մոդել, անիմացիա, խաղ, վիկտորինա, բառարան, հանրագիտարան, հատուկ ծրագրեր) թվային տեղեկատվության կրիչների վրա և (կամ) համակարգչային ցանցում տեղակայված ուսումնական նյութեր են:

3. Ուսումնական նյութերի փորձաքննություն անցկացնելիս և դրանք գործածության երաշխավորելիս անհրաժեշտ է ղեկավարվել սույն փաստաթղթում տրված ուսումնական նյութերի բովանդակությանը, կառուցվածքին, ընտրությանն ու փորձաքննությանը ներկայացվող պահանջներով:

II. Ուսումնական նյութերի բովանդակությանը ներկայացվող պահանջներ

4. Ուսումնական նյութերի բովանդակությանը ներկայացվող հիմնական պահանջներն են՝
5. Ուսումնական նյութերի բովանդակության համապատասխանությունը հետևյալ հիմնական դիդակտիկական սկզբունքներին.

- 1) տեղեկատվական
- 2) խթանող (մոտիվացիոն)
- 3) ամրակայման, վերահսկման և ինքնակրթության
- 4) զարգացնող
- 5) դաստիարակչական:

6. Ուսումնական նյութերի բովանդակության համապատասխանությունը ուսումնական նյութի ներկայացման մեթոդամանկավարժական հետևյալ պահանջներին.

- 1) Բովանդակության մեջ միջառարկայական և ներառարկայական կապերի արտացոլումը.
- 2) Ուսումնական նյութի շարադրման հաջորդայնության սկզբունքի պահպանումը.
- 3) Ուսումնական նյութերի բովանդակության, այդ թվում՝ շարադրանքի մատչելիության սկզբունքի ապահովումը:

III Ուսումնական նյութերի կառուցվածքին ներկայացվող պահանջներ

7. Ուսումնական նյութերի կառուցվածքին ներկայացվող պահանջներն են.

1) Ուսումնական նյութերի տեքստի բովանդակության (հիմնական, լրացուցիչ տեքստ և բացատրական տեքստեր) համապատասխանությունն իր նշանակությանը.

2) Ուսումնական նյութերի մեթոդական համակարգի համապատասխանությունը բովանդակությանը.

3) Նկարազարդումների համապատասխանությունը ուսումնական նյութի բովանդակությանը.

4) Ուսումնական նյութերի հրատարակչական որակը:

Ուսումնական նյութերը կազմվում են թղթային և էլեկտրոնային տարբերակներով:

IV Ուսումնական նյութերի ընտրությանը ներկայացվող պահանջներ

8. Ուսումնական նյութերի ընտրությանը ներկայացվող հիմնական պահանջներն են.

1) Ուսումնական նյութերի բովանդակության համապատասխանությունը պետական կրթական չափորոշիչների, ընդհանուր և հատուկ մասնագիտական մոդուլների ուսումնադաստիարակչական պահանջներին.

2) Մեկից ավելի ձեռնարկների և այլ ուսումնական նյութերի առկայության դեպքում՝ նոր ներդրվող չափորոշիչների ուսումնադաստիարակչական պահանջների իրականացման առաջնահերթությունը.

3) Բովանդակության համապատասխանությունը տարբեր կրթական չափորոշիչներում ընդգրկված մոդուլների դասավանդմանն ուղղված ուսումնական խնդիրների իրականացմանը.

4) Մոդուլային ուսուցման նոր, գործնականում իրականացմանն ուղղված ուսումնամեթոդական բովանդակության առկայությունը.

5) Տարբեր ուսումնական հաստատություններում ձեռնարկի կիրառման հանգամանքը.

6) Ձեռնարկը օգտագործող ուսանողների թվաքանակը.

7) Աշխատաշուկայի պահանջները հաշվի առնելը:

V Ուսումնական նյութերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ

9. Ուսումնական նյութերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներն են.

1) Ձեռնարկների և այլ ուսումնական նյութերի գործածության երաշխավորության գործընթացն իրականացվում է փորձաքննության միջոցով: Փորձաքննությունը փորձագետի կողմից Ուսումնական նյութի՝ հեղինակային բնօրինակի վերլուծության գործընթաց է, որի նպատակը համապատասխան նյութին ներկայացվող պահանջներին հեղինակային բնօրինակի համապատասխանության բացահայտումն է:

2) Փորձաքննության ներկայացված աշխատանքը Ուսումնական նյութի որևէ տեսակին համապատասխանությունը որոշելիս՝ հիմք են ընդունվում Հայաստանի Հանրապետության արհեստագործական և միջին մասնագիտական կրթության բովանդակությունը, ուսուցման գործընթացը կանոնակարգող իրավական ակտերը, մանկավարժական, գիտական գրականության մեջ ընդունված սահմանումները, հասկացությունները, ձևակերպումները և սույն կարգի դրույթները:

10. Ուսումնական նյութի փորձագիտական կարծիքի հիմնական մասը ներառում է.

1) Ուսումնական նյութի թեմաների, գլուխների և պարագրաֆների բնութագիրը՝ ըստ էջերի. թվարկվում են փորձնական ստուգում անցկացնողի կողմից հայտնաբերված թերությունները՝ ձևակերպումների սխալներն ու անճշտությունները, մեթոդական բացթողումները:

2) Հիմնական և լրացուցիչ տեքստերի տարրերի, նկարագարդումների՝ փորձագետի կարծիքով լրամշակման ենթակա մասերը, նյութերը:

11. Փորձաքննության արդյունքում կազմված փորձագիտական եզրակացությունն ընդգրկում է փորձաքննության ներկայացված Ուսումնական նյութի ամբողջական վերլուծությունը՝ ներառելով փաստարկներ և հիմնավորումներ հեղինակային աշխատանքի՝ ուսումնական հրատարակության բովանդակությանը և կառուցվածքին ներկայացվող չափանիշներին (գիտականություն, մատչելիություն և մանկավարժական, մեթոդական, լեզվա- ոճական և այլ բնութագրիչներ) համապատասխանության վերաբերյալ:

12. Ուսումնական նյութերի գործածության վերաբերյալ փորձագիտական եզրակացություն եզրափակիչ մասը կազմվում է հետևյալ տարբերակներով՝

1) «Ներկայացված ուսումնական նյութը (անվանում, հեղինակ) կարող է երաշխավորվել գործածության»:

2) «Ներկայացված ուսումնական նյութը (անվանում, հեղինակ) կարող է երաշխավորվել գործածության լրամշակումից հետո»:

3) «Ներկայացված ուսումնական նյութը (անվանում, հեղինակ) չի երաշխավորվում գործածության»:

Փորձագիտական կարծիքը ստորագրվում է (նշվում են փորձաքննություն իրականացնող հաստատության և մասնագետի(ների) անունները):

13. Փորձագիտական բացասական եզրակացության դեպքում ներկայացված Ուսումնական նյութը վերադարձվում է հեղինակին՝ կցելով փորձագիտական եզրակացությունը: Փորձագիտական եզրակացության կամ բացասական կարծիքի վերաբերյալ անհամաձայնությունների, դիտողությունների, առարկությունների դեպքում հեղինակը կարող է դիմել Նախարարություն՝ իր միջոցների հաշվին կրկնակի փորձաքննություն իրականացնելու նպատակով:

VI Ձեռնարկների և այլ ուսումնական նյութերի ընտրության և փորձաքննության գործընթաց

14. Յուրաքանչյուր տարվա սկզբում Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Կրթության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոն (այսուհետ՝ ՄԿՈՒԶԱԿ) պաշտոնական կայքում դրվում է հայտարարություն մասնագիտական կրթության և ուսուցման ձեռնարկների և այլ ուսումնական նյութերի հայտերի ընդունման վերաբերյալ:

15. Ձեռնարկների և այլ ուսումնական նյութերի ստեղծման հայտ կարող են ներկայացնել հեղինակը (հեղինակային խումբը), հրատարակչությունը, այլ ֆիզիկական և իրավաբանական անձինք:

16. Ձեռնարկների և այլ ուսումնական նյութերի ստեղծման հայտերը (թղթային և էլեկտրոնային տարբերակով) ներկայացվում են ՄԿՈՒԶԱԿ: Հայտում նշվում են ուսումնական նյութի անվանումը, հեղինակը (հեղինակային կազմը), բովանդակության համառոտ նկարագրությունը և առաջարկի հիմնավորումը:

17. ՄԿՈՒԶԱԿ-ը, արհեստագործական և միջին մասնագիտական կրթության բնագավառը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի, չափորոշիչների, Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատություններում օգտագործվող ուսումնական ձեռնարկների և այլ ուսումնական նյութերի ընտրության ու փորձաքննության կարգի և սույն ընթացակարգի պահանջներին համապատասխան, կազմում է տվյալ տարում հրատարակման համար առաջարկվող ձեռնարկների և այլ ուսումնական նյութերի ցանկը, համապատասխան տեխնիկական առաջադրանքը և մինչև փետրվարի 1-ը ներկայացնում Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի նախնական և միջին մասնագիտական կրթության վարչություն (այսուհետ՝ ՆՄՄԿ վարչություն):

18. ՆՄՄԿ վարչությունը (կամ նրա համաձայնությամբ՝ ՄԿՈՒԶԱԿ-ը) ուսումնական նյութերի ցանկը և տեխնիկական առաջադրանքը ներկայացնում է Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային խորհրդի (այսուհետ՝ ՄԿՈՒԶԱԽ) քննարկմանը: ՄԿՈՒԶԱԽ-ի

կողմից հավանության արժանանալուց հետո ձեռնարկների և այլ ուսումնական նյութերի ցանկը ՆՄՄԿ վարչությունը մինչև տվյալ տարվա մարտի 1-ը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի (այսուհետ՝ նախարար) հաստատմանը:

19. Նախարարի կողմից հաստատված ցանկի հիման վրա ՄԿՈՒԶԱԿ-ը կազմակերպում է ձեռնարկների և այլ ուսումնական նյութերի ստեղծման աշխատանքը: Այդ աշխատանքն ավարտվում է մինչև տվյալ տարվա հուլիսի 1-ը:

20. Ավարտված աշխատանքները արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատություններում օգտագործվող ուսումնական ձեռնարկների և այլ ուսումնական նյութերի ընտրության ու փորձաքննության կարգի և սույն կարգի պահանջներին համապատասխան ներկայացվում են փորձաքննության:

21. Ձեռնարկների և այլ ուսումնական նյութերի փորձաքննությունն իրականացնում է ՄԿՈՒԶԱԿ-ը արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն իրականացնող ուսումնական հաստատությունների համապատասխան մասնագետների, անհրաժեշտության դեպքում՝ այլ հաստատությունների ու կազմակերպությունների մասնագետների, մանկավարժական և այլ աշխատողների ներգրավմամբ (առնվազն երկու փորձագիտական եզրակացություն):

22. Փորձաքննությունն իրականացվում է 30-օրյա ժամկետում: Անհրաժեշտության դեպքում փորձաքննության ժամկետը կարող է երկարաձգվել, բայց ոչ ավելի, քան 15 օրով:

23. Փորձաքննության արդյունքում տրված դրական եզրակացության հիման վրա հրատարակման պատրաստ ձեռնարկները և այլ ուսումնական նյութերը մինչև սեպտեմբերի 20-ը ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից ներկայացվում են նախարարի հաստատմանը:

24. Ներկայացված ձեռնարկները և այլ ուսումնական նյութերը նախարարի կողմից հաստատվում են 10-օրյա ժամկետում:

25. Նախարարի կողմից հաստատված ձեռնարկները և այլ ուսումնական նյութերը ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից ներկայացվում է հրատարակման: Ձեռնարկների և այլ ուսումնական նյութերի հրատարակման նախապատրաստումը և տպագրությունն ավարտվում է մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը: